ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

27 փետրվարի 2016 թվականի N.26-Հ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ, 54-րդ հոդվածներով, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով, հիմք ընդունելով «ՎԱՐԴ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերության 2015 թվականի հունիսի 08-ի դիմումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության թիվ ԲՖ-02 դրական եզրակացությունը՝

Հրամայում եմ

1. «ՎԱՐԴ ԱՂԲՅՈՒՐ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹ-29/533 թույլտվությունը՝ (այսուհետ՝ թույլտվություն) ՀՀ Շիրակի մարզի «Ղուկասյանի» ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 10Բ հորատանցքից՝ արդյունաբերական (շշալցում) նպատակով 5,6լ/վրկ ածխաթթվային հանքային ջրի և ուղեկից բաղադրիչի (ածխաթթու գազի) կորզման արդյունահանման աշխատանքներ կատարելու համար:

2. Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 176600մ^3 ածխաթթվային հանքային ջուր և 880տ ածխաթթու գազ:

3. Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝

1) 2 օրվա ընթացքում նախապատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված հանքավայրի (տեղամասի) օգտակար հանածոների արդյունահանման ընդերքօգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) և ծանուցել

ընկերությանը՝ սույն հրամանը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում օգտակար հանածոների արդյունահանման պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո, 10 օրվա ընթացքում, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման անդորրագրի ներկայացումից անմիջապես հետո, ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի (թույլտվություն, պայմանագիր, համապատասխան փորձաքննություն անցած նախագիծ) փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրը չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում օգտակար հանածոների արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ